

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (այսուհետեւ՝ կուսակցություն, հապավումը՝ ՀՀԿ) իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ միջազգային պայմանագրերի, ՀՀ օրենսդրության եւ սույն կանոնադրության հիման վրա:

1.2. Կուսակցությունը գործում է ժողովրդավարության եւ նախաձեռնությունների ազատ դրսեւորման սկզբունքներով, օգտվում է ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով ընձեռված բոլոր իրավունքներից եւ կրում դրանցով սահմանված պարտավորություններ:

1.3. Կուսակցությունը ձգտում է ժողովրդավարական ընտրությունների միջոցով ապահովել իր ներկայացուցչությունը ՀՀ Ազգային ժողովում եւ տեղական ինքնակառավարման մարմիններում. այդ ճանապարհով մասնակցում է պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների ձեւավորմանը ու պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

## 2. ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կուսակցությունն իր գործունեության նպատակներն ու խնդիրներն է համարում՝

- \* հայոց ազգային անկախ պետականության ամրապնդումը եւ զարգացումը.
- \* ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության կերտումը.
- \* ՀՀ Սահմանադրության եւ օրենքների շրջանակներում՝ իշխանությունների կազմավորման գործընթացին, պետության կառավարմանը մասնակցելը.
- \* ՀՀ քաղաքական համակարգի կայունացմանն ու ամրապնդմանը նպաստելը.
- \* քաղաքացիական հասարակության կառուցմանն օժանդակելը:

## 3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Կուսակցության անդամները պետք է ընդունեն կուսակցության ծրագիրը, գործեն կանոնադրության շրջանակներում չհանդիսանան այլ կուսակցության անդամ:

Կուսակցության անդամ կարող են լինել 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում ընտրական իրավունքով օժտված այլ անձինք՝ առանց կուսակցության ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմիններում ընտրվելու իրավունքի:

3.2. Կուսակցությանն անդամագրվում են անձնական դիմումի համաձայն՝

- \* կուսակցության տարածքային կազմակերպության խորհրդի որոշմամբ.
- \* կուսակցության մարզային կազմակերպության խորհրդի որոշմամբ.
- \* կուսակցության կազմակերպչական հանձնաժողովի որոշմամբ:

3.3. Կուսակցության անդամն անդամագրվում է կուսակցության որեւէ սկզբնական կազմակերպության:

3.4. Կուսակցության անդամը մուծում է անդամավճար (չափը կամավոր է):

3.5. Եթե ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքներով կուսակցությանն անդամակցությունը անթույլատրելի է դառնում, այն կասեցվում է կուսակցության անդամի դիմումի հիման վրա, տարածքային կազմակերպության խորհրդի կամ կուսակցության կազմակերպչական հանձնաժողովի որոշմամբ: Կասեցման վերացումը կատարվում է նույն կարգով:

3.6. Կուսակցության անդամն իրավունք ունի՝

\* ընտրել եւ ընտրվել կուսակցության եւ տարածքային ու կառուցվածքային ստորաբաժանումների մշտապես գործող ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմիններում, տեղեկատվություն ստանալ կուսակցության ու նրա ղեկավար մարմինների գործունեության վերաբերյալ, վերահսկողություն իրականացնել նրանց գործունեության նկատմամբ.

\* կուսակցության ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել առաջարկություններ.

\* մասնակցել այն ժողովին եւ նիստին, որտեղ քննարկվում է նրա անձնական հարցը կամ առաջարկությունը, արտահայտել իր կարծիքը քննարկվող հարցերի վերաբերյալ.

\* դուրս գալ կուսակցության շարքերից՝ իր դիմումի համաձայն.

\* բողոքարկել կուսակցության սկզբնական, տարածքային եւ մարզային մարմինների որոշումները կուսակցության վերադաս մարմիններում:

3.7. Կուսակցության անդամը պարտավոր է՝

\* գործել կուսակցության կանոնադրության շրջանակներում.

\* կատարել կուսակցության վերադաս մարմինների որոշումները.

\* մասնակցել իր սկզբնական կազմակերպության ժողովներին եւ միջոցառումներին:

3.8. Կուսակցականի խրախուսման միջոցները

Կուսակցականը կարող է պարգևատրվել՝

\* շնորհակալագրով.

\* պատվոգրով.

\* թանկարժեք նվերով կամ դրամական խրախուսանքով:

3.9. Իր կանոնադրական պարտականությունները չկատարելու դեպքում կուսակցականը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝

\* նկատողություն.

\* անդամության կասեցում մինչեւ 6 ամիս ժամկետով.

\* հեռացում կուսակցության շարքերից:

#### **4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ**

4.1. Կուսակցության կառուցվածքային հիմքը կուսակցության սկզբնական կազմակերպություններն են: Սկզբնական կազմակերպությունը բաղկացած է կուսակցության առնվազն 15 անդամից: Սկզբնական կազմակերպությունը ստեղծվում է տարածքային հատկանիշով:

Սկզբնական կազմակերպություն կարող են ձևավորել՝

\* կուսակցության կազմակերպչական հանձնաժողովը.

\* կուսակցության խորհուրդը.

\* կուսակցության մարզային խորհուրդը.

\* կուսակցության տարածքային խորհուրդը:

4.2 Սկզբնական կազմակերպության ժողովը հրավիրվում է առնվազն ամիսը մեկ անգամ: Կազմակերպության ժողովն օրինական է, եթե ժողովին մասնակցում է կազմակերպության անդամների 2/3-ը: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց կամ գաղտնի քվեարկությամբ: Գաղտնի քվեարկությունն անցկացվում է ներկաների 1/3-ի պահանջով:

4.3 Սկզբնական կազմակերպության ժողովն ընտրում է կազմակերպության նախագահ՝ բաց քվեարկությամբ, ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, երկու տարի ժամկետով: Սկզբնական կազմակերպության ժողովի որոշմամբ կարող է կատարվել սկզբնական կազմակերպության նախագահի վաղաժամկետ ընտրություն:

4.4. Սկզբնական կազմակերպությունը հաշվետու է կուսակցության տարածքային խորհրդին: Կազմակերպությունը ներկայացնում է հաշվետվություն տարին մեկ անգամ՝ կազմակերպության նախագահի կողմից՝ հաջորդ տարվա հունվար ամսվա ընթացքում: Կուսակցության հերթական համագումարից ոչ ուշ, քան 25 օր առաջ սկզբնական կազմակերպությունը կատարում է կազմակերպության նախագահի նոր ընտրություն:

4.5. Սկզբնական կազմակերպությունն իր դրամական եկամուտները (անդամավճարներ, նվիրատվություն) փոխանցում է կուսակցության տարածքային խորհրդին:

## **5. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ**

5.1. Մարզերում եւ Երեւան քաղաքի թաղային համայնքներում ստեղծվում են կուսակցության տարածքային կազմակերպություններ: Սկզբնական կազմակերպության նախագահներն ի պաշտոնե տարածքային կազմակերպության խորհրդի անդամներ են:

5.2. Կուսակցության տարածքային խորհրդի նախագահը եւ նրա տեղակալը ընտրվում են կուսակցության տարածքային խորհրդի անդամների կազմից՝ բաց կամ գաղտնի քվեարկությամբ, ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, երկու տարի ժամկետով: Տարածքային խորհրդի որոշմամբ կարող է կատարվել տարածքային խորհրդի նախագահի եւ նրա տեղակալի վաղաժամկետ ընտրություն: Այն սկզբնական կազմակերպությունը, որի նախագահն ընտրվում է տարածքային խորհրդի նախագահ կամ նրա տեղակալ, ընտրում է նոր նախագահ: Կուսակցության հերթական համագումարից ոչ ուշ, քան 20 օր առաջ կատարվում է տարածքային խորհրդի նախագահի եւ նրա տեղակալի նոր ընտրություն:

5.3. Կուսակցության տարածքային խորհրդի նիստերը հրավիրվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Նիստն օրինական է, եթե մասնակցում է խորհրդի անդամների առնվազն 2/3-ը: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց կամ գաղտնի քվեարկությամբ: Գաղտնի քվեարկությունն անցկացվում է ներկաների 1/3-ի պահանջով: Կուսակցության տարածքային խորհուրդը իր գործունեության մասին

հաշվետու է մարզային խորհրդին, հաշվետվությունը ներկայացվում է տարին մեկ անգամ՝ կուսակցության տարածքային խորհրդի նախագահի կողմից: Կուսակցության տարածքային խորհուրդն իր դրամական եկամուտները փոխանցում է կուսակցության դրամարկո: Մարզային խորհրդի որոշմամբ դրանք կարող են փոխանցվել տարածքային խորհրդի տնօրինությանը: Կուսակցության տարածքային խորհուրդը ծախսերի մասին հաշվետվությունը յուրաքանչյուր կիսամյակ ներկայացնում է մարզային խորհրդին:

5.4. Կուսակցության տարածքային խորհուրդն իրավունք ունի կուսակցության սկզբնական կազմակերպությունը լուծարելու հարց բարձրացնել կուսակցության մարզային խորհրդի առջև:

5.5. Երեւան քաղաքի համայնքների տարածքային խորհուրդներն իրենց գործունեության մասին հաշվետվություն են ներկայացնում կուսակցության խորհրդին:

## **6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ**

6.1. Հայաստանի Հանրապետության մարզերում ստեղծվում են մարզային կուսակցական կազմակերպություններ, որոնք կուսակցության տարածքային ստորաբաժանումներն են: Մարզային խորհուրդը կազմվում է մարզի տարածքում գործող տարածքային կազմակերպությունների նախագահներից եւ նրանց տեղակալներից:

6.2. Կուսակցության մարզային խորհրդի նախագահը եւ նրա տեղակալը ընտրվում են մարզային խորհրդի անդամների կազմից՝ բաց կամ գաղտնի քվեարկությամբ, ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, երկու տարի ժամկետով: Մարզային խորհրդի որոշմամբ կարող է կատարվել մարզային խորհրդի նախագահի եւ նրա տեղակալի վաղաժամկետ ընտրություն: Այն տարածքային կազմակերպությունը, որի ղեկավարն ընտրվում է մարզային խորհրդի նախագահ կամ նրա տեղակալ, ընտրում է նոր ղեկավար: Կուսակցության հերթական համագումարից ոչ ուշ, քան 15 օր առաջ մարզային խորհուրդը կատարում է մարզային խորհրդի նախագահի եւ նրա տեղակալի նոր ընտրություն:

6.3. Կուսակցության մարզային խորհրդի նիստերը հրավիրվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Նիստն օրինական է, եթե մասնակցում է խորհրդի անդամների առնվազն 2/3-ը: Մարզային խորհրդի որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց կամ գաղտնի քվեարկությամբ: Գաղտնի քվեարկությունն անցկացվում է ներկաների 1/3-ի պահանջով:

6.4. Կուսակցության մարզային խորհուրդն իր գործունեության մասին հաշվետու է կուսակցության խորհրդին: Հաշվետվությունը ներկայացվում է տարին մեկ անգամ՝ կուսակցության մարզային խորհրդի նախագահի կողմից:

6.5. Կուսակցության մարզային խորհուրդը վերահսկում է տարածքային կազմակերպությունների աշխատանքները: Կուսակցության մարզային խորհուրդը կարող է լուծարել կուսակցության սկզբնական կազմակերպությունը՝ իր նախաձեռնությամբ կամ կուսակցության տարածքային կազմակերպության

առաջարկով: Կուսակցության մարզային խորհուրդը կուսակցության տարածքային կազմակերպության լուծարման հարցը կարող է ներկայացնել կուսակցության խորհուրդ:

## 7. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

7.1. Կուսակցության խորհրդի որոշմամբ կարող են ստեղծվել եւ լուծարվել կուսակցության կառուցվածքային ստորաբաժանումներ:

## 8. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

8.1. Կուսակցության համագումարը կուսակցության բարձրագույն մարմինն է, որի ընդունած որոշումները պարտադիր են կուսակցության մարմինների, անդամների համար:

8.2. Կուսակցության հերթական համագումարները հրավիրվում են երկու տարին մեկ անգամ: Կուսակցության խորհրդի որոշմամբ կարող է հրավիրվել արտահերթ համագումար: Հերթական համագումարի հրավիրումից մեկ ամիս առաջ կուսակցության նախագահը հրավիրում է կուսակցության խորհրդի նիստ, որտեղ քննարկվում է համագումարի օրակարգի նախագիծը:

8.3. Կուսակցության համագումարի պատվիրակների ընդհանուր թիվը որոշում է կուսակցության խորհուրդը՝ ելնելով կուսակցության անդամների ընդհանուր թվից: Պատվիրակները առաջադրվում են սկզբնական կազմակերպությունների ժողովներում: Համագումարն իրավագոր է, եթե ներկա է (գրանցված է) պատվիրակների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը: Համագումարի որոշումներն ընդունվում են բաց կամ գաղտնի քվեարկությամբ, ներկաների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ կանոնադրության ու ծրագրի ընդունման, դրանցում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու, կուսակցության վերակազմակերպման, ինչպես նաեւ կուսակցության կողմից հանրապետության նախագահի թեկնածու առաջադրելու մասին հարցերի, որոնց դեպքում որոշումներն ընդունվում են պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Գաղտնի քվեարկությունն անցկացվում է ներկաների ձայների 1/3-ի պահանջով:

8.4. Կուսակցության համագումարը՝

- \* լսում եւ հաստատում է կուսակցության նախագահի հաշվետվությունը.
- \* քննարկում եւ հաստատում է կուսակցության ծրագիրը, կանոնադրությունը եւ դրանցում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները.
- \* ընտրում է կուսակցության նախագահ.
- \* ընտրում է կուսակցության խորհուրդ.
- \* որոշում է կուսակցության ռազմավարական քաղաքական ուղին, կուսակցության նպատակների իրագործման գործելակերպը.
- \* լսում եւ հաստատում է կուսակցության վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը.
- \* ընտրում է կուսակցության վերստուգիչ հանձնաժողով՝ կուսակցության ֆինանսական գործունեության վերահսկման համար, որի անդամների թիվը հաստատում է

կուսակցության համագումարը: Վերստուգիչ հանձնաժողովի անդամը կուսակցության խորհրդի անդամ լինել չի կարող: Վերստուգիչ հանձնաժողովի անդամներն ընտրում են հանձնաժողովի նախագահ: Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու է միայն կուսակցության համագումարին:

\* որոշում է ընդունում կուսակցության լուծարման մասին: Լուծարման հարցը համագումարի օրակարգ կարող է մտցվել կուսակցության խորհրդի անդամների 2/3-ի կողմից ընդունված որոշմամբ: Լուծարման մասին որոշումն ընդունվում է համագումարի պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ: Կուսակցության լուծարման մասին որոշում ընդունելուց հետո ստեղծվում է լուծարային հանձնաժողով, որը ՀՀ օրենքով սահմանված կարգով տնօրինում է կուսակցության գույքային եւ ֆինանսական միջոցները՝ համաձայն համագումարի որոշման:

## 9. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ

9.1. Կուսակցության նախագահն ընտրվում է համագումարի կողմից՝ երկու տարի ժամկետով: Կուսակցության նախագահի թեկնածություններն առաջադրվում են համագումարի պատվիրակների կողմից: Կուսակցության նախագահ է ընտրվում գաղտնի քվեարկության արդյունքում համագումարի պատվիրակների առավել ձայներ ստացած թեկնածուն:

9.2. Կուսակցության նախագահը, կուսակցության խորհրդի անդամների կազմից առաջադրում է կուսակցության խորհրդի նախագահ և կուսակցության նախագահի տեղակալներ: Կուսակցության նախագահի բացակայության դեպքում խորհրդի նախագահը կամ տեղակալներից մեկը կուսակցության նախագահի հանձնարարությամբ իրականացնում է կուսակցության նախագահի լիազորությունները:

9.3. Կուսակցության նախագահը՝

\* ձեռնարկում է կուսակցության գործադիր մարմին, որը բաղկացած է կուսակցության խորհրդի նախագահից, կուսակցության նախագահի տեղակալներից, հանձնաժողովների նախագահներից եւ ԱԺ-ում ՀՀԿ խմբակցության ղեկավարից: Կուսակցության գործադիր մարմինը կատարում է համագումարի եւ խորհրդի ընդունած որոշումները, կուսակցության նախագահի հանձնարարականները, քննարկում եւ լուծում է կուսակցության հետ կապված ընթացիկ խնդիրները, մշակում եւ խորհրդի հաստատմանն է ներկայացնում կուսակցության գործունեության համար անհրաժեշտ փաստաթղթերի նախագծերը: Կուսակցության նախագահի առաջարկով գործադիր մարմնի աշխատանքներին կարող են մասնակցել նաև կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները: Կուսակցության նախագահի հանձնարարությամբ կուսակցության գործադիր մարմնի նիստերը կարող են վարել խորհրդի նախագահը կամ նախագահի տեղակալներից որեւէ մեկը: Գործադիր մարմինը վերահսկում է տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը:

\* ներկայացնում է կուսակցության շահերը եւ դիրքորոշումը պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, քաղաքական եւ միջազգային

կազմակերպությունների հետ հարաբերություններում կամ դրա համար լիազորում է կուսակցության այլ անդամների.

\* ի պաշտոնե կուսակցության խորհրդի անդամ է.

\* հրավիրում է կուսակցության խորհրդի կամ գործադիր մարմնի նիստ.

\* ղեկավարում է կուսակցության գործադիր մարմնի աշխատանքները եւ անհրաժեշտության դեպքում՝ նախագահում խորհրդի նիստերը.

\* հաստատում է կուսակցության խորհրդի որոշումները կուսակցության պաշտոնաթերթի եւ այլ պարբերականների հրատարակման մասին.

կազմավորում է իր աշխատակազմը.

\* կարող է ստեղծել խորհրդակցական մարմիններ.

\* կուսակցության անունից հաստատում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը.

սահմանում է կուսակցության նախագահի տեղակալների կողմից անմիջականորեն համակարգվող ոլորտները.

\* իրականացնում է կուսակցության ընդհանուր ղեկավարումը.

\* կուսակցության խորհրդի հաստատմանն է ներկայացնում կուսակցության գործադիր մարմնի առաջարկները.

\* կուսակցության խորհրդի հաստատմանն է ներկայացնում ԱԺ-ում ՀՀԿ խմբակցության ղեկավարի, հանձնաժողովների նախագահների և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների թեկնածությունները.

Կուսակցության պաշտոնական դիրքորոշումներն արտահայտում են կուսակցության նախագահը և նրա տեղակալները:

## 10. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒԴԸ

10.1. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը կուսակցության խորհուրդն է: Կուսակցության խորհուրդն ընտրվում է կուսակցության համագումարում: Կուսակցության խորհրդի անդամության թեկնածություններն առաջադրվում են համագումարի պատվիրակների կողմից: Կուսակցության խորհուրդը համարվում է կազմավորված, եթե ընտրված է նրա անդամների առնվազն 2/3-ը:

10.2. Կուսակցության մարզային խորհուրդների, Երեւան քաղաքի տարածքային կազմակերպությունների խորհուրդների նախագահները, կուսակցության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները կուսակցության խորհրդի կազմում ընդգրկվում են ի պաշտոնե: Կուսակցության խորհրդի անդամների թիվը որոշում է կուսակցության համագումարը: Կուսակցության խորհրդի անդամների ընտրությունը կատարվում է գաղտնի քվեարկությամբ: Ընտրված են համարվում համագումարի պատվիրակների առավել ձայներ ստացած թեկնածուները:

10.3. Խորհրդի նիստերը հրավիրվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Կուսակցության նախագահը կամ խորհրդի անդամների 1/3-ը կարող են հրավիրել արտահերթ նիստ: Նիստն օրինական է, եթե ներկա է խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:

10.4. Կուսակցության խորհրդի անդամը կարող է կասեցնել իր գործունեությունը խորհրդում: Կուսակցության խորհրդի անդամի գործունեության կասեցման հարցը կարող է քննարկվել նաև կուսակցության նախագահի կամ խորհրդի անդամների 1/3-ի

պահանջով: Որոշումը կայացվում է կուսակցության խորհրդի անդամների ձայների 2/3-ով, բաց քվեարկությամբ: Կուսակցության խորհուրդն իրավագոր է, եթե պահպանվում է նրա կազմի 2/3-ը:

#### 10.5. Կուսակցության խորհուրդը՝

- \* հրավիրում է կուսակցության հերթական կամ արտահերթ համագումար.
  - \* վերահսկում է կուսակցության համագումարի հրավիրման նախապատրաստական աշխատանքները.
  - \* վերահսկում է համագումարի եւ իր որոշումների կատարումը.
  - \* հաստատում է գործադիր մարմնի կողմից մշակված և ներկայացված՝ կուսակցության գաղափարախոսական հիմնադրույթները, ծրագրային և կանոնադրական փաստաթղթերի նախագծերը, կուսակցության մարտավարական սկզբունքները, կուսակցության անունից անում է հայտարարություններ և առաջարկություններ.
  - \* հաստատում է Ազգային ժողովում կուսակցության խմբակցության գործունեության հիմնական ուղղությունները.
  - \* կուսակցության նախագահի առաջարկով որոշում է կայացնում կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծման կամ լուծարման մասին: Կուսակցության նախագահի առաջարկությամբ հաստատում է դրանց ղեկավարների թեկնածությունները.
  - \* հսկողություն է իրականացնում կուսակցության մամուլի, լրատվական եւ հրատարակչական ծառայությունների գործունեության նկատմամբ.
  - \* կարող է կուսակցության մարզային խորհրդի առաջարկությամբ լուծարել կուսակցության տարածքային կազմակերպությունը.
  - \* իր նախաձեռնությամբ եւ կուսակցության նախագահի համաձայնությամբ կարող է լուծարել կուսակցության մարզային կազմակերպությունը.
  - \* հաստատում է կուսակցության նախագահի կողմից առաջադրված կուսակցության նախագահի տեղակալների, հանձնաժողովների նախագահների եւ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների թեկնածությունները.
  - \* տարեկան մեկ անգամ լսում է կուսակցության մարզային խորհուրդների հաշվետվությունները.
  - \* հաստատում է ՀՀ Ազգային ժողովում կուսակցության կողմից առաջադրվող պատգամավորների թեկնածուներին.
  - \* հաստատում է կուսակցության նախընտրական ծրագիրը:
- հաստատում է ԱԺ-ում ՀՀԿ խմբակցության ղեկավարի թեկնածությունը:

10.6. Կուսակցության խորհուրդը դադարեցնում է իր լիազորությունները հերթական կամ կուսակցության խորհրդի ընտրության օրակարգով հրավիրված արտահերթ համագումարի սկսելու օրը:

#### 10.7. Կուսակցության խորհրդի նախագահը՝

վարում է կուսակցության խորհրդի նիստերը.

ի պաշտոնե՝ կուսակցության նախագահի տեղակալ է, գործադիր մարմնի անդամ.

արտահայտում է կուսակցության պաշտոնական դիրքորոշումները.

փոխարինում է կուսակցության նախագահին՝ նրա բացակայության դեպքում:



## 11. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

11.1. Կուսակցության դրամական միջոցները ձեւավորվում են՝  
անդամավճարներից,  
օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

11.2. Կուսակցությանը սեփականության իրավունքով կարող են պատկանել ծրագրային  
եւ կանոնադրական խնդիրների իրականացման համար անհրաժեշտ շինություններ,  
դրամական, փոխադրական միջոցներ, օրենսդրությամբ չարգելված այլ գույք եւ  
միջոցներ:

11.3. Դրամական միջոցները տնօրինում են կուսակցության նախագահը,  
կուսակցության խորհուրդը եւ կուսակցության մարզային կազմակերպությունների  
խորհուրդները՝ ըստ կուսակցության խորհրդի կողմից հաստատված նախահաշվի:

## 12. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12.1. Կուսակցությունն ունի իրավաբանական անձի համար ՀՀ օրենսդրությամբ  
սահմանված բոլոր իրավունքները եւ կրում է համապատասխան  
պարտականություններ:

12.2. Կուսակցությունն ունի դրոշ, անվանաթուղթ, կլոր կնիք, հաշվարկային հաշիվ  
բանկում՝ ինչպես ազգային դրամով, այնպես էլ արտարժույթով: Կուսակցության կնիքը  
իրավասու է օգտագործել միայն կուսակցության նախագահը կամ կուսակցության  
խորհրդի անդամը՝ կուսակցության նախագահի որոշմամբ:

12.3. ՀՀԿ դրոշը սպիտակ, 1X2 հարաբերակցությամբ, ոսկեգույն ծոպքերով պաստառ է,  
որի կենտրոնում պատկերված է ՀՀԿ խորհրդանիշը՝ 0.5 հարաբերակցությամբ: ՀՀԿ  
խորհրդանիշը հայկական ավանդական հավերժանշանն է՝ ութ թերթիկներով, աջ  
պտույտով, կենտրոնում՝ սուր եւ թեւերը տարածած արծիվ:

12.4. ՀՀԿ խորհրդանիշը պարտադիր է ունենալ ՀՀԿ դրոշի, կնիքի, անվանաթերթի եւ  
կրծքանշանի վրա: Թույլատրվում է պատրաստել հուշանվերներ ՀՀԿ խորհրդանիշի  
պատկերումով, միայն ՀՀԿ խորհրդի որոշմամբ:

12.5. Կուսակցության իրավաբանական հասցեն է՝ ք. Երեւան, Մելիք-Աղամյան 2